



Թ. ՏԱՐԻ. ԹԻԻ 1 - 3

ՆՈՐ ԾՐՋԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ - ԱՊՐԻԼ 1938



Ա Ն Տ Ի Պ Է Ջ Ե Ր

ՈՒՓԱՅԷԼ ՊԱՏՎԱՆԵԱՆԻ ՄԷԿ ՈՏԱՆԱԻՈՐ ԵՐԳԻԾԱՆՔԸ

Հետեւեալ գրուած ջր որ ցարդ անտիպ մը-
 նացած է եւ որուն հեղինակին ձեռքով գրուած
 օրինակը բարեկամի մը կողմէ ինծի հաղորդը-
 ւեցաւ, մին է այն երգիծական էջերէն (արձակ
 եւ ոտանաւոր) զոր Ռափայէլ Պատկանեան Նոր
 Նախիջեանի բարբառով շարադրած է եւ որոնց
 շատերը հրատարակած է Սիւլիւս ծածկանու-
 նով: Խայթող հելլուսթիամբ լի այդ էջերը մեծ-
 անուն բանաստեղծին գործին մէջ որոշ ու կա-
 բուցուած բաժին մը կը կազմեն: Ներկայ երգիծան-
 քին մէջ, որ ամենէն բնորոշներէն մին է,
 Գամառ-Քաթիկա իր սլաքներուն իբր թիրախ
 առած է Նոր-Նախիջեանի իր ժամանակակից

յայտնի անձնաւորութիւններէն մին, Սերբո Յա-
 րութիւնեան, հմուտ ու խորամանկ մարդ, լաւ
 ուսերէն զիտցող, տիրամոլ ու ճարպիկ տեսակ
 մը ամիրայ, որ իբր Նոր-Նախիջեանի ջաղաքա-
 յին վարչութեան բարտուղար՝ երեսուն տարի
 շարունակ ջաղաքին մէջ ցանկացած է եւ գրեթէ
 միշտ յաջողած է ամէն ինչ իր ուզածին պէս
 դարձնել: Իմ վաղեմի բարեկամ Ռուբէն Բեր-
 բերեանն է որ այս տեղեկութիւնները տուաւ
 ինծի, ինչպէս եւ բացատրութիւնները Նոր Նա-
 խիջեանի տեղական բարբառի բնորոշ բառե-
 րուն:

Ա. Զ.

55-169